ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՝ հավատավոր հայրենակիցներ, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հայ ժողովուրդը տոնում են Քրիստոսի հրաշափառ Հարության՝ Սուրբ Զատկի տոնը:

Քրիստոս եկավ աշխարհ՝ սրբագործելու այն մարդկության մեղքերից և սեր ու խոնարհություն քարոզելու, և հարություն առավ՝ վկայելով, որ Տերն է ամենակարողը:

Շրջապատված ամենօրյա տագնապներով ու մարտահրավերներով՝ մեզանից յուրաքանչյուրի սրբազան պարտքը պիտի լինի մեր աղոթքներն ուղղելու առ Տերն ու խնդրելու, որ հարություն առած Քրիստոսը բնակվի մեր հայրենիքի ներսում ու խաղաղություն բերի նրա վրա, իսկ մեր ժողովրդին տա անսասան հավատ ու միասնական ոգի՝ չարը վանելու ու նորոգվելու համար:

Սիրելի հավատավոր հայրենակիցներ, ժամանակն է լինեն կրկնակի անգամ ավելի խոնարհ ու խոհուն, բացել մեր հոգին՝ Տիրոջ բնակության համար:

Թող տոնի խորհուրդը ձեր սրտերը լցնի առաքինությամբ ու հավատով, ձեր ընտանիքները պահի խաղաղության ու սիրո մեջ:

Թող Տերը հովանի լինի ձեզ ձեր բոլոր գործերում:

Քրիստոս հարյավ ի մեռելոց,

Օրհնյալ է հարությունը Քրիստոսի:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան